ՅԱՂԹԱՆԱԿԸ

Նուէր՝ «Հայգիրք»ի բանաստեղծին.
Գ. ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆԻՆ:

Կատաղութեան ակռաներով կը կրծէր
Իր պարտութիւնն, ամօթն ու կա՛րծրը շղթան:
Հսկըւած՝ հայ պահակներէ, կը կարծէր
Բանտն՝ արծուեբո՞յն, գերի իշխա՛նը ալան:

Նըման Կուրին, իր լեռներէն ռազմասէր՝
Ասպատակ ուխն էր ողողած Հայաստան :
Նըման Կուրին, պիտի՝ կարմիր՝ արդ հոսէ՞ր
Ճակատագրին ալիքը դէ՛պ ի վախճան ... :

Դոռ՛յթ մը, յանկարծ...Ու շռի՛նդ ,ձայնե՛ր...Ու արե՛ւ :
Քո՛յրն որ վզին կը պլլըւի, հեւիհեւ :
«Հրճուէ՛, եղբա՛յր. մուրն աւրեցի՛ քու ճակտէն» :

Իսկ Արտաշէս, անյիշաչար՝ զի սիրո՛ղ,
«Ձեռքերս իմ այս որ քու շղթան կը քանդեն.
Օր մ՚ալ գլխուդ կը դնեն թա՛գ ոսկէօղ» :

5-4-39 *ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԼ.*

digitised by A.R.A.R.@